ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի
խորհրդի 26/04/2018թ թիվ 11-Լ որոշմամբ
Փոփոխված է
27/06/2018թ թիվ 30-Լ որոշմամբ
02/03/2020թ թիվ 6-Լ որոշմամբ
29/11/2022թ թիվ 37-Լ որոշմամբ

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի
խորհրդի նախագահ

_____ Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

«20» հունվարի 2023թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Մարտին Գալստյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-005

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ

ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ, ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ

ԲԱԺԻՆ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից սպառողներին տրամադրվող տեղեկատվության կազմն ու կառուցվածքը, տեղեկատվության տրամադրման, ինչպես նաև տրամադրված տեղեկատվության վերանայման և բողոքարկման կարգը և պայմանները:

ԳԼՈՒԽ 2

ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կանոններում օգտագործվող հիմնական հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստով՝

1) **Սպառող՝** անձ, որի հետ կապված տեղեկատվությունը արտացոլված է Տեղեկատվական համակարգում, կամ արտացոլված չէ, սակայն ըստ տվյալ անձի՝ ենթակա է արտացոլման,

2) **ապահովագրական պատմություն՝** ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում Սպառողի վերաբերյալ գրանցված տեղեկատվություն կամ տեղեկությունների ամբողջություն,

3) **գրասենյակ՝** ապահովագրական ընկերության՝ ԱՊՊԱ պայմանագրերի կնքման գործընթացում անմիջականորեն ներգրավված ցանկացած տարածք՝ գլխամաս, մասնաճյուղ, ինչպես նաև ապահովագրական ընկերության անունից ԱՊՊԱ պայմանագրերի կնքմանև սույն կանոններով նախատեսված տեղեկատվության կամ դրա մի մասի տրամադրման իրավասություն ունեցող ապահովագրական գործակալի գործունեության տարածք: *(2-րդ կետի 3-րդ ենթակետը լրաց. է 27/06/2018թ. թիվ 30-Լ)*

3. Սույն կանոններում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքում և (կամ) «ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» RL 1-001 կանոններում կիրառվող նշանակությունը, եթե սույն կանոններում այլ բան սահմանված չէ:

ԳԼՈՒԽ 3

ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԻՊԱՅԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

4. ԱՊՊԱ համակարգից տրամադրվող ստանդարտ տեղեկատվության տիպային ձևերը, ինչպես նաև ԱՊՊԱ ոլորտում անձի ապահովագրական պատմության և Բոնուս-Մալուս (այսուհետ՝ ԲՄ) դասի բողոքարկման գործընթացում կիրառվող հաղորդակցման տիպային օրինակները սահմանված են սույն կանոնների Հավելված 1-ով: Ընդ որում, տեղեկատվության տրամադրումը կամ հաղորդակցումը Բյուրոյի կամ ապահովագրական ընկերության՝ Բյուրոյի կանոնների համաձայն պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով իրականացվելու կամ www.appa.am կայքում ցուցադրվելու դեպքում Հավելված 1-ով նախատեսված տիպային օրինակների՝ ստորագրության համար նախատեսված դաշտերում կարող է արտացոլվել միայն Բյուրոյի կամ համապատասխան ապահովագրական ընկերության անվանումը. նման փաստաթղթերը համարվում են Բյուրոյի (ապահոգվագրական ընկերության) անունից

համապատասխան փաստաթուղթն ստորագրելու իրավասություն ունեցող անձի կողմից փաստացի ստորագրված (ունեն նույն իրավական ուժը)՝ Բյուրոյի կանոնների համաձայն պատշաճ էլեկտրոնային փոստով ուղարկվելու ուժով:*(4-րդ կետը լրաց. է 27/06/2018թ. թիվ 30-Լ)*

ԲԱԺԻՆ 2

ԱՊՊԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 4

ԱՊՊԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից տեղեկատվության տրամադրման կարգը, պայմանները և ժամկետները սահմանված են սույն կանոնների հավելված 2-ով:

6. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում ԲՄ դասին առնչվող տվյալների գրանցումների վերաբերյալ քաղվածքը տրամադրվում է միայն 2017 թվականի նոյեմբերի 1-ից հետո կնքված ԱՊՊԱ պայմանագրերից բխող՝ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում գրանցումների վերաբերյալ, բայց ոչ ավել, քան տեղեկատվության արտացոլման ամսաթվին նախորդող չորս տարիների կտրվածքով:

7. Սույն կանոնների 5-րդ կետով սահմանված պահանջները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին, ապահովագրական ընկերություններին, դատարաններին, քրեական հետապնդման մարմիններին, պետական այլ մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, սնանկության գործերով կառավարիչներին և օրենքի համաձայն համապատասխան տեղեկատվություն ստանալու իրավունք ունեցող այլ անձանց տրամադրվող տեղեկատվության վրա, որոնց Բյուրոն օրենքի շրջանակներում ԱՊՊԱ համակարգից տեղեկատվություն է տրամադրում Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից սահմանված ձևերով և ժամկետներում:

8. Ապահովագրական ընկերությունները պարտավոր են Հավելված 2-ի համաձայն ստացված դիմումները՝ կից փաստաթղթերով և տեղեկատվությամբ, Բյուրոյին փոխանցել նույն օրվա ընթացքում, եթե դրանցով հարցվող տեղեկատվությունը ենթակա է տրամադրման Բյուրոյի կողմից:

ԲԱԺԻՆ 3

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՄ ԴԱՍԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 5

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Սպառողների ապահովագրական պատմության վերանայման կարգը, պայմանները և ժամկետները սահմանված են Հավելված 3-ով:

10. Սպառողը կարող է պահանջել իր ապահովագրական պատմության վրա ազդող միայն այն տեղեկատվության վերանայում, որը Տեղեկատվական համակարգում արտացոլվել է պահանջի ներկայացման օրվան նախորդող չորս տարվա ընթացքում: *(10-րդ կետը փոփ. է 27/06/2018թ. թիվ 30-Լ)*

ԳԼՈՒԽ 6

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՄ ԴԱՍԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Սպառողների ապահովագրական պատմության և (կամ) ԲՄ դասի հաշվարկի բողոքարկման կարգը, պայմանները և ժամկետները սահմանված են Հավելված 4-ով:

12. Սպառողի ապահովագրական պատմության վրա ազդող տեղեկատվությունը կարող է բողոքարկվել սույն կանոնների Հավելված 4-ով սահմանված կարգով, եթե սույն կանոնների Հավելված 3-ի համաձայն՝ դրա գծով իրականացվել է վերանայման գործընթաց, և Սպառողը համաձայն չէ ապահովագրական ընկերության կողմից տրված պատասխանին:

13. Սպառողը կարող է բողոքարկել իր ապահովագրական պատմության վրա ազդող միայն այն տեղեկատվությունը, որը Տեղեկատվական համակարգում արտացոլվել է բողոքարկման օրվան նախորդող չորս տարվա ընթացքում: *(13-րդ կետը փոփ. է 27/06/2018թ. թիվ 30-Լ)*

14. Սպառողը կարող է բողոքարկել միայն բողոքարկման օրվան նախորդող չորս տարվա ընթացքում իր կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրերում կիրառված ԲՄ դասը: *(14-րդ կետը փոփ. է 27/06/2018թ. թիվ 30-Լ)*

ԲԱԺԻՆ 4

ԳԼՈՒԽ 7

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15. Անկախ սույն կանոններով սահմանված դիմումների ստացումից՝ եթե պարզվում է, որ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, ապա ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) համապատասխան փոփոխություն է կատարում ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում՝ այդ մասին գրավոր ձևով հայտնելով համապատասխան Սպառողին:

16. Ապահովագրական ընկերություններն ապահովում են, որպեսզի սույն կանոնների շրջանակում տեղեկատվության տրամադրման, վերանայման և բողոքարկման գործընթացում իրենց կողմից իրականացման ենթակա գործողությունները կատարվեն նաև իրենց գրասենյակների միջոցով: *(16-րդ կետը փոփ. է 27/06/2018թ. թիվ 30-Լ)*

17. Սույն կանոնների իմաստով ապահովագրական ընկերություն կամ Բյուրո ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրերին՝ ժամը 17:30-ից հետո, ներկայացված գրավոր դիմումները, պահանջները և անհամաձայնությունները համարվում են ստացված հաջորդ աշխատանքային օրը:

Հավելված 1
«ԱՊՊԱ ոլորտում սպառողների վերաբերյալ տվյալների հրապարակման, տրամադրման, վերանայման և բողոքարկման» RL 1-005 կանոնների
(փոփ. է 02/03/2020թ թիվ 6-Լ)
Հավելված 1.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ
ԲՅՈՒՐՈ

Ն ԱՊՊԱ 01

ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.	Ավտոտրանսպորտային միջոցի (այսուհետ՝ ՏՄ) հաշվառման համարանիշը		
2.	Տեղեկանքում տեղեկատվության արտացոլման ամսաթիվը	Ամսաթիվը	Ժամը
3.	Տեղեկանքում արտացոլված տեղեկատվության աղբյուրը	*Տեղեկատվության արտացոլման ամսաթվի դրությամբ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում գրանցված (ճշգրտված) տվյալներ*	
4.	Հարցված ամսաթիվը և ժամը	Ամսաթիվը	Ժամը
5.	Հարցված ամսաթվի դրությամբ ՏՄ վերաբերյալ գործող ԱՊՊԱ պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվություն		
Հ/հ	Ապահովագրական ընկերության անվանումը		

Տրամադրող	**Ստացող**
ստորագրություն	*ստորագրություն*

Հավելված 1
Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի
խորհրդի 29/11/2022թ թիվ 37-L որոշման

Հավելված 1.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ
ԲՅՈՒՐՈ

Ն ԱՊՊԱ 02

ՏԵՂԵԿԱՆՔ N ____

ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆՁԻ ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ (ԲՄ) ԴԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.	Անձի անուն, ազգանուն (անվանում)		
2.	Անձի նույնականացման տվյալներ *(ֆիզիկական անձանց դեպքում անձը հաստատող փաստաթղթի համար, սերիա և ՀԾՀ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ ՀՎՀՀ և պետական գրանցման համար)*		
3.	Անձի էլեկտրոնային փոստի հասցե *ուժի մեջ կմտնի տեխնիկական հնարավորությունների ապահովման պահից		
4.	Տեղեկանքում տեղեկատվության արտացոլման ամսաթիվը	Ամսաթիվը	Ժամը
5.	Տեղեկանքում արտացոլված տեղեկատվության աղբյուրը	*Տեղեկատվության արտացոլման ամսաթվի դրությամբ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում գրանցված (ճշգրտված) տվյալներ*	
6.	Տեղեկատվությունն ընդգրկող ժամանակահատված (այսուհետ՝ Ժամանակահատված)	Սկիզբ	Ավարտ
		01.01.2011	Տեղեկատվության արտացոլման ամսաթիվ

7. Ժամանակահատվածում անձի կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվություն

Հ/հ	Համար	Կնքման ամսաթիվ	Պայմանագրի գործողության սկիզբ	Պայմանագրի գործողության ավարտ	Պայմանագիրը կնքած ապահովագրական ընկերության անվանում

8. Ժամանակահատվածում անձի կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրերի գծով կատարված հատուցումների վերաբերյալ տեղեկատվություն

Հ/հ	Ապահովագրական պատահարի ամսաթիվ, պատահարի ժամ	Ապահովագրական պատահարի նույնականացուցիչ	Ապահովագրական պատահարին մասնակից ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր	ԱՊՊԱ պայմանագրի համար	Ապահովագրական հատուցման ամսաթիվ	Ապահովագրական հատուցման համար	Ապահովագրական հատուցման չափ (ՀՀ դրամ)	Ապահովագրական պատահարի օրվա դրությամբ անձի գործող ԱՊՊԱ պայմանագրերում նշված ավտոմեքենաների թիվ	Հատուցում իրականացրած ապահովագրական ընկերության անվանում

9.	Անձի ԲՄ դասը	

10.	Բոնուս ստանալու համար կուտակված պայմանագրային օրերի քանակը	
11.	Վերջին անգամ մալուս ստանալուց հետո ստացված բոնուսային դասերի քանակը	
12.	Սույն տեղեկանքին կցված հավելվածները	**Հավելված 1.** Անձի ապահովագրական պատմությունում արտացոլված տվյալների ազդեցությունը բոնուս-մալուս (ԲՄ) դասի հաշվարկման վրա
		Հավելված 2. ԱՊՊԱ ոլորտում անձի՝ որպես լիազորված տիրապետող բոնուս-մալուս (ԲՄ) դասի և դրա հաշվարկման համար հիմք հանդիսացող ապահովագրական պատմության որոշ մանրամասների վերաբերյալ

ԱՊՊԱ ոլորտում ապահովագրավճարի և ԲՄ դասի հաշվարկման մեթոդաբանության մանրամասները հրապարակված են Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի www.appa.am կայքում:

Տրամադրող	**Ստացող**
ստորագրություն	*ստորագրություն*

Ուշադրություն՝

1. Սույն տեղեկանքում արտացոլված են միայն այն տվյալները, որոնք ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում կապակցված են սույն տեղեկանքի 2-րդ կետում նշված նույնականացման տվյալներով:

2. Սույն տեղեկանքը կարող է ստացվել կամ հարցվել միայն այն անձի կողմից, ում վերաբերում է հարցվող տեղեկատվությունը կամ նրա կողմից պատշաճ լիազորված անձի կողմից:

3. Տեղեկանքի ստացման հարցում կամ պահանջ ներկայացրած անձը պատասխանատու է իր մոտ նման հարցում կատարելու կամ պահանջ ներկայացնելու համապատասխան հիմքերի առկայության համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան նույնականացումներն իրականացվել են ապահովագրական ընկերության կամ Բյուրոյի կողմից:

Հավելված 1

ԱՊՊԱ ոլորտում անձի բոնուս-մալուս (ԲՄ) դասի և դրա հաշվարկման համար հիմք հանդիսացող ապահովագրական պատմության որոշ մանրամասների վերաբերյալ թիվ _____ տեղեկանքի

ԱՆՁԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱՑՈԼՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ (ԲՄ) ԴԱՍԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՎՐԱ

(ժամանակագրական հերթականությամբ)

ԲՄ դասի փոփոխման ամսաթիվ	ԲՄ դասի փոփոխման նկարագրությունը

Հավելված 2

ԱՊՊԱ ոլորտում անձի բոնուս-մալուս (ԲՄ) դասի և դրա հաշվարկման համար հիմք հանդիսացող ապահովագրական պատմության որոշ մանրամասների վերաբերյալ թիվ ___ տեղեկանքի

ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆՁԻ՝ ՈՐՊԵՍ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՏԻՐԱՊԵՏՈՂ ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ (ԲՄ) ԴԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.	ԱՊՊԱ պայմանագրերի գծով տեղեկատվություն, որոնցում տվյալ անձը հանդիսացել է լիազորված տիրապետող				
Հ/հ	***Համար***	***Կնքման ամսաթիվ***	***Լիազորված տիրապետող հանդիսանալու սկիզբ***	***Լիազորված տիրապետող հանդիսանալու ավարտ***	***Պայմանագիրը կնքած ապահովագրական ընկերության անվանում***

2.	Տվյալ անձի կողմից երրորդ անձանց պատճառած վնասի գծով կատարված հատուցումների մասին տեղեկատվություն						
Հ/հ	Ապահովագրական պատահարի ամսաթիվ, պատահարի ժամ	Ապահովագրական պատահարի նույնականացուցիչ	ԱՊՊԱ պայմանագրի համար	Ապահովագրական հատուցման ամսաթիվ	Ապահովագրական հատուցման համար	Ապահովագրական հատուցման չափ (ՀՀ դրամ)	Հատուցում իրականացրած ապահովագրական ընկերության անվանում

3.	Տվյալ անձի համար վերջին անգամ որպես լիազորված տիրապետող հաշվարկված ԲՄ դասի վերաբերյալ տեղեկատվություն	
ԲՄ դաս ստանալու կամ փոխվելու ամսաթիվ		ԲՄ դաս

Հավելված 1.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ
ԲՅՈՒՐՈ

Ն ԱՊՊԱ 03

ՔԱՂՎԱԾՔ

ԱՊՊԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՆՁԻ ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ (ԲՄ) ԴԱՍԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ)

1.	Անձի անուն, ազգանուն (անվանում)		
2.	Անձի նույնականացման տվյալներ *(ֆիզիկական անձանց դեպքում անձը հաստատող փաստաթղթի համար, սերիա և ՀԾՀ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ ՀՎՀՀ և պետական գրանցման համար)*		
3.	Քաղվածքում տեղեկատվության արտացոլման ամսաթիվը	Ամսաթիվը	Ժամը
4.	Քաղվածքում արտացոլված տեղեկատվության աղբյուրը	*ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում տեղեկատվության արտացոլման ամսաթվի դրությամբ գրանցված (ճշգրտված) տվյալներ*	
5.	Տեղեկատվությունն ընդգրկող ժամանակահատված	Սկիզբ	Ավարտ

Անձին վերաբերող տվյալների փոփոխման ամսաթիվ	Անձին վերաբերող տվյալների փոփոխման նկարագրությունը	Տվյալի փոփոխման պահին անձի ԲՄ դասի մեծությունը

Տրամադրող	Ստացող
ստորագրություն	ստորագրություն

Ուշադրություն՝

1. Սույն տեղեկանքում արտացոլված են միայն այն տվյալները, որոնք ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում կապակցված են սույն տեղեկանքի 2-րդ կետում նշված նույնականացման տվյալներով:

2. Սույն քաղվածքը կարող է ստացվել կամ հարցվել միայն այն անձի կողմից, ում վերաբերում է հարցվող տեղեկատվությունը կամ նրա կողմից պատշաճ լիազորված անձի կողմից:

3. Սույն քաղվածքի ստացման հարցում կամ պահանջ ներկայացրած անձը պատասխանատու է իր մոտ նման հարցում կատարելու կամ պահանջ ներկայացնելու համապատասխան հիմքերի առկայության համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան նույնականացումներն իրականացվել են ապահովագրական ընկերության կամ Բյուրոյի կողմից:

Հավելված 1.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ
ԲՅՈՒՐՈ

ԱՊՊԱ 04

ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՊՊԱ ոլորտում վարորդի մեղավորությամբ տեղի ունեցած վթարների վերաբերյալ

1.	Վարորդի անունը, ազգանունը		
2.	Վարորդի նույնականացման տվյալները		
3.	Տեղեկատվության արտացոլման ամսաթիվը	Ամսաթիվը	Ժամը
4.	Տեղեկատվության աղբյուրը	ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում տեղեկատվության արտացոլման ամսաթվի դրությամբ գրանցված (ճշգրտված) տվյալներ	
5.	Տեղեկատվությունն ընդգրկող ժամանակահատվածը (այսուհետ՝ ժամանակահատված)	**Սկիզբ**	**Ավարտ**
			Ամսաթիվը / **Ժամը**
		01.01.2011	
6.	Ժամանակահատվածում վարորդի մեղավորությամբ տեղի ունեցած պատահարներն ըստ ամսաթվերի		
Հ/h	ԱՊՊԱ պատահարի (վթարի) ամսաթիվը		

Տրամադրող	Ստացող
ստորագրություն	ստորագրություն

Ուշադրություն՝

1. Սույն տեղեկանքում արտացոլված են միայն այն տվյալները, որոնք ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում կապակցված են սույն տեղեկանքի 2-րդ կետում նշված նույնականացման տվյալներով:
2. Սույն տեղեկանքը կարող է ստացվել կամ հարցվել միայն այն անձի կողմից, ում վերաբերում է հարցվող տեղեկատվությունը կամ նրա կողմից պատշաճ լիազորված անձի կողմից:
3. Տեղեկանքի ստացման հարցում կամ պահանջ ներկայացրած անձը պատասխանատու է իր մոտ նման հարցում կատարելու կամ պահանջ ներկայացնելու համապատասխան հիմքերի առկայության համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան նույնականացումներն իրականացվել են ապահովագրական ընկերության կամ Բյուրոյի կողմից:

Հավելված 1
Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի
խորհրդի 29/11/2022թ թիվ 37-L որոշման

Հավելված 1.5

ԴԻՄՈՒՄ **ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**			
Դիմումի ամսաթիվը			
	օր	ամիս	տարի
Դիմում ներկայացնող անձը (այսուհետ՝ անձ)			
	(նշվում են անձի անունը, ազգանունը, անձնագրի համարը և ՀԾՀ-ն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը և ՀՎՀՀ-ն)		
Դիմումի հասցեատերը			
	(նշվում է դիմումն ընդունած ապահովագրական ընկերության անվանումը)		
Համաձայն չեմ ապահովագրական պատմությունում արտացոլված հետևյալ տեղեկատվությանը: Խնդրում եմ վերանայել այն:	**Տեղեկատվությունը** **(լրացվում է ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից արտահանված համապատասխան տեղեկանքում (քաղվածքում) բացակայող կամ սխալ արտացոլված տվյալը՝ համապատասխան տողի համարով**	**Անձի նկատառումները դրանց վերաբերյալ**	
Նամակագրության էլեկտրոնային փոստի հասցե (եթե ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով նախատեսված է ծանուցման կոնկրետ հասցե, ապա այդ հասցեից տարբերվող հասցեի նշումն իրավական ուժ չունի)			
Դիմում ներկայացնող անձի անունից հանդես եկող անձը			
	(անունը և ազգանունը)	(ստորագրություն)	

Հավելված 1.6

ՀԱՐՑՈՒՄ ԱՊՊԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Հարցման ամսաթիվը			
	օր	ամիս	տարի
Հարցում իրականացնողը			
	(նշվում է հարցում իրականացնող ապահովագրական ընկերության անվանումը)		
Հարցվող Ապահովագրողը (ները)			
	(նշվում են տեղեկատվությունը մուտքագրած ապահովագրական ընկերությունների անվանումները)		
Տեղեկատվության վերանայման պահանջ ներկայացրած անձը			
	(նշվում են անձի անունը, ազգանունը, անձնագրի համարը և ՀԾՀ-ն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը և ՀՎՀՀ-ն)		
Անձի կողմից վիճարկվող տեղեկատվությունը			
	(լրացվում է ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից արտահանված համապատասխան տեղեկանքում (քաղվածքում) բացակայող կամ սխալ արտացոլված տվյալը՝ համապատասխան տողի համարով)		
Կցվող փաստաթղթերի ցանկը	Համապատասխան տեղեկանք (քաղվածք), որտեղ արտացոլված է բացակայող կամ սխալ արտացոլված տվյալը, ինչպես նաև բացակայող տվյալը հիմնավորող փաստաթղթեր (առկայության դեպքում)		
Խնդրում ենք Բյուրոյի կանոններով սահմանված կարգով վերանայել Տեղեկատվության վերանայման պահանջ ներկայացրած անձի կողմից վիճարկվող և Ձեր կողմից Տեղեկատվական համակարգ մուտքագրված տեղեկատվությունը՝ Բյուրոյի կանոններով սահմանված ժամկետներում ուղղումներ կատարելով համակարգում կամ ներկայացնելով նշված տեղեկատվությունը հիմնավորող փաստաթղթեր:			
Հարցումն իրականացնողի իրավասու անձը			
	(անունը և ազգանունը, պաշտոնը)	(ստորագրություն)	

Հավելված 1.7

ՀԱՐՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ ԱՊՊԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Հարցման ամսաթիվը			
	օր	ամիս	տարի
Հարցում իրականացրած Ապահովագրողը			
	(նշվում է հարցում իրականացրած ապահովագրական ընկերության անվանումը)		
Հարցված Ապահովագրողը			
	(նշվում է հարցման պատասխան ներկայացնող ապահովագրական ընկերության անվանումը)		
Տեղեկատվության վերանայման պահանջ ներկայացրած անձը			
	(նշվում են անձի անունը, ազգանունը, անձնագրի համարը և ՀԾՀ-ն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը և ՀՎՀՀ-ն)		
Վերանայման արդյունքում փոփոխված տեղեկատվությունը (տեղեկատվություն, որը չի հիմնավորվել և ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում			
	(լրացվում է ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից արտահանված համապատասխան տեղեկանքում (քաղվածքում) բացակայող կամ սխալ արտացոլված տվյալը՝ համապատասխան տողի համարով		
Վերանայման արդյունքում չփոփոխված տեղեկատվությունը (տեղեկատվությունը, որը հիմնավոր է, և դրանք հիմնավորող փաստաթղթերի ցանկ (փաստաթղթերի լուսապատճենները կցվում են)	Տեղեկատվությունը (լրացվում է ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից արտահանված համապատասխան տեղեկանքում (քաղվածքում) բացակայող կամ սխալ արտացոլված տվյալը՝ համապատասխան տողի համարով)	Հիմնավորող փաստաթղթերը	Թերթերի քանակը
Հարցման պատասխան ներկայացնողի իրավասու անձը			
	(անունը և ազգանունը, պաշտոնը)	(ստորագրություն)	
Հարցման պատասխանի ամսաթիվը			
	օր	ամիս	տարի

Հավելված 1.8

ԴԻՄՈՒՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դիմումի ներկայացման ամսաթիվը			
	օր	ամիս	տարի
Դիմում ներկայացրած անձը			
	(նշվում է ապահովագրական պատմության վերանայման պահանջ ներկայացրած անձի անունը, ազգանունը կամ անվանումը)		
Հարգելի՛ դիմող, Ձեր կողմից ներկայացված դիմումի կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.			
Ձեր կողմից վիճարկվող հետևյալ տեղեկատվությունը չի հիմնավորվել, և ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում կատարվել են համապատասխան ուղղումներ			
	(լրացվում է ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից արտահանված համապատասխան տեղեկանքում (քաղվածքում) բացակայող կամ սխալ արտացոլված տվյալը՝ համապատասխան տողի համարով)		
Ձեր կողմից վիճարկվող հետևյալ տեղեկատվությունը հիմնավորվել է, որի համար կից ներկայացնում ենք հետևյալ փաստաթղթերը	Տեղեկատվությունը (լրացվում է ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից արտահանված համապատասխան տեղեկանքում (քաղվածքում) բացակայող կամ սխալ արտացոլված տվյալը՝ համապատասխան տողի համարով)	Հիմնավորող փաստաթղթերը	Թերթերի քանակը
Ուշադրություն՝			
Վերանայման արդյունքում փոփոխված տեղեկատվության հիման վրա նախկինում ԱՊՊԱ պայմանագրի կնքման ժամանակ սխալ Բոնուս-Մալուս դաս կիրառված լինելու դեպքում Դուք կարող եք դիմել համապատասխան պայմանագիրը կնքած ապահովագրական ընկերությանը պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիր կնքելու և ավել վճարված ապահովագրավճարը վերադարձնելու համար:			
Սույն պատասխանով բավարարված չլինելու դեպքում Դուք կարող եք սույն պատասխանը ներկայացրած ապահովագրական ընկերության միջոցով կամ անմիջապես դիմել Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո՝ ապահովագրական պատմության և (կամ) դրա հիման վրա հաշվարկված Բոնուս-Մալուս դասի հաշվարկի բողոքարկման համար:			
Հարցման պատասխան ներկայացնողի			
	(անունը և ազգանունը, պաշտոնը)	(ստորագրություն)	
Հարցման պատասխանի ամսաթիվը			
	օր	ամիս	տարի

Հավելված 1
Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի
խորհրդի 29/11/2022թ թիվ 37-L որոշման

Հավելված 1.9

ԴԻՄՈՒՄ **ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ (ԿԱՄ) ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ ԴԱՍԻ ՀԱՇՎԱՐԿԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Դիմումի ամսաթիվը			
	օր	ամիս	տարի
Դիմում ներկայացնող անձը (այսուհետ՝ անձ)			
	(նշվում են անձի անունը, ազգանունը, անձնագրի համարը և ՀԾՀ-ն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը և ՀՎՀՀ-ն)		
Դիմումի հասցեատերը	**Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո**		
Համաձայն չեմ Բոնուս-Մալուս դասի հաշվարկի հետ:	**Բոնուս-Մալուս դասի հաշվարկը** **(լրացվում է ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից արտահանված համապատասխան տեղեկանքում սխալ արտացոլված տվյալը՝ համապատասխան տողի համարով)**	**Անձի նկատառումները դրանց վերաբերյալ**	
Համաձայն չեմ ապահովագրական պատմության վերանայման արդյունքում նարկայացված պատասխանի հետ:	**Տեղեկատվությունը** **(լրացվում է ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից արտահանված համապատասխան տեղեկանքում (քաղվածքում) բացակայող կամ սխալ արտացոլված տվյալը՝ համապատասխան տողի համարով)**	**Անձի նկատառումները հիմնավորումների վերաբերյալ**	**Ապահովագրական ընկերության կողմից ներկայացված հիմնավորող փաստաթղթերը**
Նամակագրության էլեկտրոնային փոստի հասցե (եթե ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով նախատեսված է ծանուցման կոնկրետ հասցե, ապա այդ հասցեից տարբերվող հասցեի նշումն իրավական ուժ չունի)			
Դիմում ներկայացնող անձի անունից հանդես եկող անձը			
	(անունը և ազգանունը)	(ստորագրություն)	

Հավելված 2
«ԱՊՊԱ ոլորտում սպառողների վերաբերյալ տվյալների հրապարակման, տրամադրման, վերանայման և բողոքարկման» կանոնների

Աղյուսակ 1

ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից տրամադրվող տեղեկատվության տրամադրման կարգը և պայմանները								
Հ/Հ	**Փաստաթղթի/ Տեղեկատվության տեսակը**	**Տեղեկատվությունը ստանալու իրավունք ունեցող անձինք**	**Ներկայացվող/համակարգում մուտքագրվող տեղեկությունների ցանկը**	**Պահանջի ներկայացման ձևերը (ըստ աղյուսակ 2-ում ներկայացված բացվածքի)**	**Ում ներկայացնել պահանջը (նույնականացման պատասխանատուն)**	**Սպառողին տեղեկանքի/տեղեկատվության տրամադրման**		
						Եղանակը	**Ժամկետը**	**համար վճարը (առկայության դեպքում)**
1	**Տեղեկանք Ն ԱՊՊԱ 01՝ Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ գործող ԱՊՊԱ պայմանագրի վերաբերյալ (Հավելված 1.1)**	Ցանկացած անձ	1. Ավտոտրսնպորտայի ն միջոցի հաշվառման համարանիշ, **2.** Հարցվող ամսաթիվ և ժամ	Ձև 1	ՊԿԱ, իսկ դրա բացակայության դեպքում ցանկացած ապահովագրական ընկերություն	Դիմումում նշված եղանակով	Ապահովագրական ընկերության գրասենյակում պահանջը ներկայացվելու դեպքում՝ 15 րոպեի ընթացքում, մնացած դեպքերում՝ ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում	Էլեկտրոնային հասցեին ուղարկելու դեպքում՝ անվճար, իսկ թղթային եղանակով տրամադրվելու դեպքում՝ պահանջի ներկայացմանը նախորդող մեկ տարվա մեջ նման տեղեկանք ստացված չլինելու դեպքում՝ անվճար, իսկ ստացված լինելու դեպքում՝ համապատասխան ապահովագրակա ն ընկերության կողմից սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան 1000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր տեղեկանքի համար
				Ձև 2	ՊԿԱ, իսկ դրա բացակայության դեպքում ցանկացած	Դիմումում նշված եղանակով	Ապահովագրական ընկերության գրասենյակում պահանջը	Էլեկտրոնային հասցեին ուղարկելու դեպքում՝ անվճար,

					ապահովագրական ընկերություն		ներկայացվելու դեպքում՝ 15 րոպեի ընթացքում, մնացած դեպքերում՝ ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում	իսկ թղթային եղանակով տրամադրվելու դեպքում՝ պահանջի ներկայացմանը նախորդող մեկ տարվա մեջ նման տեղեկանք ստացված չլինելու դեպքում՝ անվճար, իսկ ստացված լինելու դեպքում՝ համապատասխան ապահովագրակա ն ընկերության կողմից սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան 1000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր տեղեկանքի համար
				Չև 3	ՊԿԱ, իսկ դրա բացակայության դեպքում ցանկացած ապահովագրական ընկերություն*	Դիմումում նշված եղանակով	Ապահովագրական ընկերության գրասենյակում պահանջը ներկայացվելու դեպքում՝ 15 րոպեի ընթացքում, մնացած դեպքերում՝ ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում	Անվճար
				Չև 4	www.appa.am կայքի առցանց հարցում իրականացնելու միջոցով*	www.appa.am կայքում ցուցադրելու միջոցով, իսկ համապատասխ ան պահանջի դեպքում՝ նաև հարցման մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին	Պահանջը ներկայացնելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան 15 րոպեի ընթացքում	Անվճար

						ուղարկվելու միջոցով		
2	**Տեղեկանք Ն ԱՊՊԱ 02՝ ԱՊՊԱ ոլորտում անձի Բոնուս-Մալուս (ԲՄ) դասի և դրա հաշվարկման համար հիմք հանդիսացող ապահովագրական պատմության վերաբերյալ (Հավելված 1.2)**	Անձ, ում վերաբերում է հարցումը կամ նրա կողմից լիազորված անձ	**1. Ֆիզիկական անձանց դեպքում՝** 1) Անձը հաստատող փաստաթղթի համար, 2) ՀԾՀ կամ ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանք (հատկացված լինելու դեպքում) 3) անձի անուն, ազգանուն (նշած տեղեկատվությունը ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից ստացվելու անհնարինության և համակարգի կողմից նման հարցում ստացվելու դեպքում) **2. Իրավաբանական անձանց դեպքում՝** 1) ՀՎՀՀ 2) պետական գրանցման համար 3) անվանում (նշած տեղեկատվությունը ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից ստացվելու անհնարինության և համակարգի կողմից նման հարցում ստացվելու դեպքում)	Ձև 1	ՊԿԱ, իսկ դրա բացակայության դեպքում ցանկացած ապահովագրական ընկերություն	Դիմումում նշված եղանակով	Ապահովագրական ընկերության գրասենյակում պահանջը ներկայացվելու դեպքում՝ 15 րոպեի ընթացքում, մնացած դեպքերում՝ ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում	Էլեկտրոնային հասցեին ուղարկելու դեպքում՝ անվճար, իսկ թղթային եղանակով տրամադրվելու դեպքում՝ պահանջի ներկայացմանը նախորդող մեկ տարվա մեջ նման տեղեկանք ստացված չլինելու դեպքում՝ անվճար, իսկ ստացված լինելու դեպքում՝ համապատասխան ապահովագրակա ն ընկերության կողմից սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան 1000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր տեղեկանքի համար
				Ձև 2	ՊԿԱ, իսկ դրա բացակայության դեպքում ցանկացած ապահովագրական ընկերություն	Առձեռն տրամադրելու կամ նրա պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվելու միջոցով	Պահանջը ներկայացնելու պահից 15 րոպեի ընթացքում	Էլեկտրոնային հասցեին ուղրկելու դեպքում՝ անվճար, իսկ իսկ թղթային եղանակով տրամադրվելու դեպքում՝ պահանջի ներկայացմանը նախորդող մեկ տարվա մեջ նման տեղեկանք ստացված չլինելու դեպքում՝ անվճար, իսկ ստացված լինելու դեպքում՝ համապատասխան ապահովագրակա

								ն ընկերության կողմից սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան 1000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր տեղեկանքի համար
				Ձև 3	ՊԿԱ, իսկ դրա բացակայության դեպքում ցանկացած ապահովագրական ընկերություն**	Պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվելու միջոցով	Ապահովագրական ընկերության գրասենյակում պահանջը ներկայացվելու դեպքում՝ 15 րոպեի ընթացքում, մնացած դեպքերում՝ ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում	Անվճար
				Ձև 4	www.appa.am կայքի առցանց հարցում իրականացնելու միջոցով**	Պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվելու միջոցով	Պահանջը ներկայացնելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան 15 րոպեի ընթացքում	Անվճար
3	**Քաղվածք Ն ԱՊՊԱ 03՝ ԱՊՊԱ ոլորտում անձի Բոնուս-Մալուս (ԲՄ) դասին առնչվող տվյալների ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում գրանցումների վերաբերյալ** *(ժամանակագրական հերթականությամբ)* **(Հավելված 1.3)**	Անձ, ում վերաբերում է հարցումը կամ նրա կողմից լիազորված անձ	**1. Ֆիզիկական անձանց դեպքում՝** 1) Անձը հաստատող փաստաթղթի համար, 2) ՀԾՀ (հատկացված լինելու դեպքում) 3) անձի անուն, ազգանուն (նշած տեղեկատվությունը ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից ստացվելու անհնարինության և համակարգի կողմից նման հարցում ստացվելու դեպքում), 4) ժամանակահատված ը, որի գծով հարցվում է տեղեկատվությունը	Ձև 1	ՊԿԱ, իսկ դրա բացակայության դեպքում ցանկացած ապահովագրական ընկերություն	Դիմումում նշված եղանակով	Ապահովագրական ընկերության գրասենյակում պահանջը ներկայացվելու դեպքում՝ 15 րոպեի ընթացքում, մնացած դեպքերում՝ ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում	Էլեկտրոնային հասցեին ուղարկելու դեպքում՝ անվճար, իսկ թղթային եղանակով տրամադրվելու դեպքում՝ պահանջի ներկայացմանը նախորդող մեկ տարվա մեջ նման քաղվածք ստացված չլինելու դեպքում՝ անվճար, իսկ ստացված լինելու դեպքում՝ համապատասխան ապահովագրակա ն ընկերության կողմից

			2. Իրավաբանական անձանց դեպքում՝ 1) ՀՎՀՀ 2) պետական գրանցման համար անվանում (նշած տեղեկատվությունը ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից ստացվելու անհնարինության և համակարգի կողմից նման հարցում ստացվելու դեպքում), 3) ժամանակահատված ը, որի գծով հարցվում է տեղեկատվությունը					սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան 1000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր քաղվածքի համար
				Չև 2	ՊԿԱ, իսկ դրա բացակայության դեպքում ցանկացած ապահովագրական ընկերություն	Առձեռն տրամադրելու կամ նրա պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվելու միջոցով	Պահանջը ներկայացնելու պահից 15 րոպեի ընթացքում	Էլեկտրոնային հասցեին ուղարկելու դեպքում՝ անվճար, իսկ թղթային եղանակով տրամադրվելու դեպքում՝ պահանջի ներկայացմանը նախորդող մեկ տարվա մեջ նման քաղվածք ստացված չլինելու դեպքում՝ անվճար, իսկ ստացված լինելու դեպքում՝ համապատասխան ապահովագրակա ն ընկերության կողմից սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան 1000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր քաղվածքի համար
				Չև 3	ՊԿԱ, իսկ դրա բացակայության դեպքում ցանկացած ապահովագրական ընկերություն**	Պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվելու միջոցով	Ապահովագրական ընկերության գրասենյակում պահանջը ներկայացվելու դեպքում՝ 15 րոպեի ընթացքում, մյուս դեպքերում՝ ստացումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում	Անվճար

				Ձև 4	www.appa.am կայքի առցանց հարցում իրականացնելու միջոցով**	Պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվելու միջոցով	Պահանջը ներկայացնելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան 15 րոպեի ընթացքում	Անվճար
4	**Տեղեկանք Ն ԱՊՊԱ 04՝ ԱՊՊԱ ոլորտում վարորդի մեղավորությամբ տեղի ունեցած վթարների վերաբերյալ (Հավելված 1.4)**	Անձ, ում վերաբերում է հարցումը կամ նրա կողմից լիազորված անձ	1. Անձը հաստատող փաստաթղթի համար, 2. ՀԾՀ (հատկացված լինելու դեպքում) 3. անձի անուն, ազգանուն (նշած տեղեկատվությունը ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից ստացվելու անհնարինության դեպքում)	Ձև 1	ՊԿԱ, իսկ դրա բացակայության դեպքում ցանկացած ապահովագրական ընկերություն	Դիմումում նշված եղանակով	Ապահովագրական ընկերության գրասենյակում պահանջը ներկայացվելու դեպքում՝ 15 րոպեի ընթացքում, մյուս դեպքերում՝ ստացումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում	Էլեկտրոնային հասցեին ուղարկելու դեպքում՝ անվճար, իսկ թղթային եղանակով տրամադրվելու դեպքում՝ պահանջի ներկայացմանը նախորդող մեկ տարվա մեջ նման տեղեկանք ստացված չլինելու դեպքում՝ անվճար, իսկ ստացված լինելու դեպքում՝ համապատասխան ապահովագրական ընկերության կողմից սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան 1000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր տեղեկանքի համար
				Ձև 2	ՊԿԱ, իսկ դրա բացակայության դեպքում ցանկացած ապահովագրական ընկերություն	Առձեռն կամ նրա պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվելու միջոցով	Պահանջը ներկայացնելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան 15 րոպեի ընթացքում	Էլեկտրոնային հասցեին ուղարկելու դեպքում՝ անվճար, իսկ թղթային եղանակով տրամադրվելու դեպքում՝ պահանջի ներկայացմանը նախորդող մեկ տարվա մեջ նման

								տեղեկանք ստացված չլինելու դեպքում՝ անվճար, իսկ ստացված լինելու դեպքում՝ համապատասխան ապահովագրակա ն ընկերության կողմից սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան 1000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր տեղեկանքի համար
				Չև 4	www.appa.am կայքի առցանց հարցում իրականացնելու միջոցով**	Հարցման մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվելու միջոցով	Պահանջը ներկայացնելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան 15 րոպեի ընթացքում	Անվճար
5	**Այլ ոչ ստանդարտ տեղեկատվություն**	Անձ, ով ՀՀ օրենսդրության համաձայն՝ իրավասու է ստանալ համապատասխան տեղեկատվությունը	Հարցման առարկան նույնականացնող տվյալներ	Չև 1	ՊԿԱ, իսկ դրա բացակայության դեպքում ցանկացած ապահովագրական ընկերություն	Դիմումում նշված եղանակով	Պահանջը ներկայացվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում	3000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր հարցման համար վճարվում է դիմումն ընդունողին՝ պահանջի ներկայացման ժամանակ
				Չև 2	ՊԿԱ, իսկ դրա բացակայության դեպքում ցանկացած ապահովագրական ընկերություն	Առձեռն կամ նրա պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվելու միջոցով	Պահանջը ներկայացվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում	3000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր հարցման համար վճարվում է դիմումն ընդունողին՝ պահանջի ներկայացման ժամանակ

* Նշված տեղեկանքի տրամադրման համար անձի նույնականացման անհրաժեշտությունը բացակայում է:

** Նշված տեղեկանքի (քաղվածքի) տրամադրման համար ապահովագրական ընկերության կողմից անձի նույնականացում չի իրականացվում, և նման հարցում կատարելու կամ պահանջ ներկայացնելու համապատասխան հիմքերի առկայության համար պատասխանատու է տեղեկանքի (քաղվածքի) ստացման հարցում կամ պահանջ ներկայացրած անձը:

Աղյուսակ 2
(4-րդ կետը լրաց. է 27/06/2018թ. թիվ 30-Լ)

ԱՊՊԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ			
Պահանջի ներկայացման ձևը	**Պահանջի ներկայացման ձևի նկարագրությունը**	**Ներկայացման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը**	**Պահանջի ներկայացման եղանակը**
Ձև 1. Գրավոր պահանջ՝ դիմողին պատշաճ նույնականացման հնարավորությամբ	Առկա է պահանջ ներկայացրած անձին պատշաճ նույնականացնելու հնարավորություն, իսկ եթե վերջինը Սպառողը չէ, ապա առկա է նաև Սպառողի կողմից նման լիազորություն տրամադրելու փաստի ստուգման հնարավորություն	1. Պահանջը ներկայացրած անձի անձը հաստատող փաստաթուղթ 2. Սպառողի կողմից պահանջը ներկայացրած անձին տրված՝ համապատասխան լիազորությունները պարունակող պատշաճ լիազորագիր (Սպառողի կողմից պահանջը չներկայացվելու դեպքում)	Դիմումն ընդունողի գրասենյակում պահանջի գրավոր ներկայացում Սպառողի պատշաճ էլեկտրոնային հասցեից դիմումն ընդունողի էլեկտրոնային հասցեին գրավոր պահանջի ներկայացում
Ձև 2. Բանավոր պահանջ՝ դիմողին պատշաճ նույնականացման հնարավորությամբ	Առկա է պահանջ ներկայացրած անձին պատշաճ նույնականացնելու հնարավորություն, իսկ եթե վերջինն Սպառողը չէ, ապա առկա է նաև Սպառողի կողմից նման լիազորություն տրամադրելու փաստի ստուգման հնարավորություն	1. Պահանջը ներկայացրած անձի անձը հաստատող փաստաթուղթ 2. Սպառողի կողմից պահանջը ներկայացրած անձին տրված՝ համապատասխան լիազորությունները պարունակող պատշաճ լիազորագիր (Սպառողի կողմից պահանջը չներկայացվելու դեպքում)	Դիմումն ընդունողի գրասենյակում պահանջի բանավոր ներկայացում
Ձև 3. Գրավոր կամ բանավոր՝ դիմողին պատշաճ նույնականացման հնարավորության բացակայությամբ	Առկա չէ պահանջ ներկայացրած անձին պատշաճ նույնականացնելու կամ Սպառողի կողմից նրան այդպիսի լիազորություն տրամադրելու փաստը ստուգելու հնարավորություն	Չկան	Դիմումն ընդունողի գրասենյակում կամ սույն կանոններով սահմանված գործընթացների համար նախատեսված հեռախոսով, փոստով, էլեկտրոնային փոստով պահանջի՝ գրավոր կամ բանավոր ներկայացում, որը չի բավարարում սույն աղյուսակի մյուս ձևերով նախատեսված պայմաններին
Ձև 4. www.appa.am կայքի միջոցով	Պահանջը ներկայացվել է կայքում առցանց հարցում իրականացնելու միջոցով	Չկան	www.appa.am կայքի ԱՊՊԱ առցանց հարցումներ բաժնում հարցման իրականացում

Սպառողների ապահովագրական պատմության վերանայման կարգը



Սպառողների ապահովագրական պատմության և (կամ) ԲՄ դասի հաշվարկի բողոքարկման կարգը



ՀՎԵԼՎԱԾ 3 ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾ 4 ՀՈՍՔԱԳՐԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՆՇՈՒՄՆԵՐ և ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ	
Հասկացություններ	
ԴՍԱ՝ սույն կանոնների Հավելված 2-ով նախատեսված անձ, ում կարող են դիմել՝ Ձև ԱՊՊԱ 01-ն ստանալու համար:	
Հոսքագրի տեխնիկական մասի բացատրություններ	
	Գործողություն
	Ժամկետ (գործողության համար նախատեսված առավելագույն աշխատանքային օրեր)
	Պատասխանատու
	Պայման
	Պարտադիր գործողություն
	Պարտադիր է զուգահեռ գործողություններից որևէ մեկը
Հոսքագրում յուրաքանչյուր փուլի գործընթացն սկսվում է նախորդ գործընթացից հետո:	
Գործընթացների հաջորդականությունն իրականացվում է սլաքների ուղղությամբ:	
Հոսքագրում զուգահեռ գործողությունները տարբեր ժամկետներ ունենալու դեպքում հիմք է ընդունվում առավելագույն ժամկետ ունեցող գործողության ժամկետը:	